

ամիսներուն մէջ՝ ինչպէս կ'ընեն իրանու զաջտագետներն ամէն կողմը: Ենորհիւ անտառներու ներկայութեան՝ որ խոնաւութիւնը կը պահպանեն, աղբիւրներն առատ են, Մեանի լճին արեւելեան կողմը գտնուող փոքր գաւառակ մը՝ Փրըք-պուլագ «քառասուն աղբիւրներ» անունը կը կրէ, բազմաթիւ առուակներու պատճառով՝ որ իր լեռներէն ծագելով՝ կէօք-Չային կը տանին իրենց յստակ ջուրերը. և այս կոչումը կ'արդարանայ Քարա-Տաղի շատ մը գիւղակներէն, կարօի և Ծորոթի նա. հանգիներէն և Հայաստանի ուրիշ բազմաթիւ գաւառներէն:

Բայց Քարա-Պաղը, անտառախիտ լեռներու, խորտուրորտ գագաթներու, մերկաբաց՝ բայց միայն հովիտներուն մէջ արգասաբեր դաշտագետներու քաօք, շատ սահմանափակ հարստութեան երկիր մ'է և որուն մէջ բնակչութիւնը չի կրնար աճիլ՝ մշակելի հողերու սակաւութեան իրեն վրայ դրած սահմաններէն աւելի: Սակայն քանի մը հեղինակներ՝ մեծ վստահութեամբ աշխատելով իրենց ատլասներուն վրայ, այս հողազանգուածին մէջ ուզած են տեսնել բոլոր արիական ցեղին ծագման երկիրը: Այս ենթադրութիւնը չկրնար պաշտպանուիլ, ոչ միայն անոր համար որ Քարա-Պաղին կը պակսի տեղը՝ այսպիսի կարեորութիւն ունեցող մարդկային ընտանիքի մը զարգացման համար, այլ և որովհետեւ լեզուագիտութեան, պատմութեան և հնախօսութեան տուած բոլոր ապացոյցներն անոր հակառակ են:

Շարունակելի

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Փ

ՀԱՅՈՒՆԻ. Հ. Վ. Հայ ծէսը 1919 տարւոյ ազգային Սիւնդոգոսի գործոց մէջ - 1919 զին. ֆր. 2.

ՍԱՐԳԻՍԵԱՆ Հ. Բ. Վսն կառաց աստուածութեան (100 օր) 1919 զին. ֆր. 50. 4.

ՄԵՂՈՒ ՇԻՐԱԿԱՅ. - Հայկական Մենամարտը (50 օր) 1919 - զին. ֆր. 50. 4.

ՈՐԲՈՒՆԻ

Յաւի մորմոքիչ տեսարանները օրէ օր կը կրկնուին և կը վերանորոգուին տխուր իրականութիւնով մեր տարաբաղդ հայրենիքին հետ հաղորդակցութեանց հաստատուելովն... Թշուառութեան ուրուականը կը սաւառնի խոժոռաղէմ, ու մահուան և օրհասի սպառնալիքը՝ Դամոկլէսի սուրին պէս կախուած է հայութեան ջրաւոր դասակարգին գլխուն վրայ...:

Արինայեղց և օրհասաբեր փոթորիկն անցաւ մեր վրայէն, իր ուժգին թափին մէջ տանելով ազգի մը կորովն և խանդաղատ ճաղիկը. բայց անոր հետեանքներն ահաբեկիչ և երբեմն վհատեցնելու աստիճան ծանրակշիռ են. Հայ մարտիրոսութեան գողգոթայի ճամբուն վրայ կուտակուեցան մեր սիրելիներուն նշխարները, անոնց արիւնով ներկուեցաւ մեր երկիրը. իրենց գացին իրենց զաղափարականին վայելքներուն արժանանալու, բայց թողուցին մեզ՝ մազապուրծ գերծուածներու սրբազան և փափկազին աւանդ մը՝ իրենց որբիկները...:

Ո՛ր սիրտը չի փղձկար, չի գալարի՝ մտածելով սոսկ այն հարիւր հազարեակներուն, - ապագայ յուսալից կոկոններ - , որոնք իրենց սրտահատոր ծնողներէն յափըշտակուած, կ'ապրին դեռ, բայց որոնց համար կեանքը երազ մը կը թուի, ցնորք մ'է՝ որուն չեն կրնար հաւատալ, անըջանք մը, որուն առջև իրենց կրած տառապանքները կ'ովկիանանան, կ'անսահմանուին... կ'ապրին դեռ՝ որովհետեւ երկնային բազուկի մը զիւրեղ փրկած է, կամ վսն զի իրենց կաշիին և ոսկրներուն մէջ դեռ սիրտ մը կայ որ կը տրոփէ և հոգի մը՝ որ կը զօրացնէ... Դեռ կը վայելեն արեւու լոյսը՝ որովհետեւ այս ինչ մահաւորականը կամ այն ինչ քիւրտը նշմարած է անոնց սեւաթորմի աչքերուն մէջ իր ապագայի կրօնափոխ որդեգիրը, կամ միւս չընադագեղ կոյսին վարդապարմիւր այտերուն և նազներին

մարմինն մէջ՝ իր տենչանքներուն զոհա-
ցումը... Ի՞նչ սարսուռ, ի՞նչ զօղմանի-
նդեան... Եւ սակայն դեռ հարիւրաւորներ
իրենց անլուռ մարտիրոսութիւնն օրէ օր
կը նորոգեն՝ փաշայի մը կղզիացած սե-
նեակին կամ վալիի մը շրջապահ կանա-
նոցին մէջ, առանց կարենալու փրկութեան
արեգակը նշմարել... Անոնց հեծեծանք-
ները՝ ներքիններուն դիւային քրքիջնե-
րուն մէջ կը զսնեն իրենց արձագանքը,
անոնց աղօթքի մրմունջները՝ անհաւատ-
ներու քստմնասարսուռ հայհոյանքներուն
մէջ կը խեղդուին...

Հայեր, այս որբերը մեր վերածնող
հայրենիքին պլպլացող յոյսերն են, չի
թողունք որ ի սպառ մարին, կորսուին,
փրկենք զիրենք։ Այո՛, պէտք ենք լալ մեր
սիրելեաց կորուստին վրայ, պէտք ենք
յուզուիլ։ Բայց չի մոռնանք որ անոնց
թողուցած աւանդներուն օգնելու ենք, ոչ
խօսքով այլ գործով։

Շատ գովելի է Կ. Պօլսոյ և Չմիւռնիայի
հայրութեան վարմունքը այդ որբերուն հան-
դէպ, ուր բացի զանազան Որբանոցներէ՝
որ մեծամեծ հարուստներու զբամանութիւն-
ութեամբ կը պահուին, ամէն ընտանիք՝
իր կարելիութեան չափով կը խնամէ մի
քանի որբիկներ... օրինակ մը՝ որ նոյն
իսկ եւրոպայի է՛ն քաղաքակիրթ ազգի մը
քով երբէք տեսնուած չէ։ Բայց շատ կա-
րեւոր է հիմնել մասնաւոր յանձնախումբ
մը, որ եւրոպական զլխաւոր պետութեանց
պաշտպանութեամբ, շրջի Հայաստան՝ լեռ-
ներու և ձորերու մէջ թափառող այդ սո-
վատանջ բեկորները հաւաքէ, փաշաներու
և վալիներու կանանոցներէն կորզէ այն
բոլոր անգիտակից կրօնափոխները, կեղբո-
նացելով զանոնք յարմար որբանոցներու
մէջ...

ՄԻԼԻՆԸ ՇԵԽԻԿԵՆԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԱՐՈՒՅԸ

✽ ✽

Գարուն, արեւ պատահը մ'է ոսկեզօծ
Շիրիմներուն վրայ փրկուած...
Գետերն ի՞նչպէս պըղտոր են,
Ու թանձրօրէն կը հոսին
Խուլ մոռնչիւնով մ'հեծկըլտագին ու ցաւոտ...
Եւ ալիքները ծանրաբեռ են դարձել,
Ու կը նետեն ավերուն վրայ ցիրուցան
Տարալուծուած դիակներ
Որոնք ահա խորհրդանիշն են զոգցես
Գարնան վըճիտ ու կենսավառ երկունքին,
Որ կը ցայտէ քոյր ու ծաղիկ լուսեղէն...
Կը հալի ձիւնն, և հոս ու հոն կ'երեւին
կէս մը թաղուած բոսորանիւրկ հողին մէջ
Գանկեր, կուրծքիւ շարդուփշուր,
Եւ բուռնցքներու՝ դէպ ի երկինքն բողբոջ
վերջին պըրկումը գայրոյթով քարացած...
Կարծես ձմեռն ըլլար պատահք մի համայն
Ձոր կը վերցնէ զարունն ահա բանալով
Գերեզմաններ. գերեզմաններ անծանօթ
Ու մերկութեամբ խղճալի՝
Որ իր ծաղկումը բաւական պիտ' ըլլայ
Շատ աւելի դառնակսկիծ տեսիլքով
Մեր աչքերէն ծածկելու...
Դաշտերն ամբողջ գերեզմաննոց են հիմա,
Ձիւնը մաշեր է բոլոր
Հէթ մեռելներն որոնց վրայ սեւածաւ
Անթիւ բոցիւր պատառոտուն կ'ալիւնին...
Ռ՞որ են վարդերն անցեալին, ո՞ր բոյներուն
Նըւագն անոյշ իր զարթօնքով խնդունակ...
Չանցնիր մեղու մը լոյսին մէջ ոսկեղէն,
Ոչ իսկ արտոյտ մը կամ ծիծառ մը դարձած
Դէպ ի երկիրն Հայութեան....

Աւերակները ձիւնհալով կը փըլչին,
Եւ բլուրներու կողմէն
Դէպ ի գետերն ու ճամբաներն ամայի
Կ'իյնան զլուխներն յօշոտուած,
Ու մարմիններ այլախոսակ
Կը թանձրանան համաձուլուած իրարու
Եւ կոյտ առ կոյտ կը թափին
Աղիքներու ողկոյզներով զարաբոյր...

Հոն ուր գարունն ամենագեղն էր, այսօր
Չունի ոսան իսկ նըլենիի մը ծաղկած,
Ոչ իսկ նուագի մը վերջին շնչաւ զըւարթ,
Մահաշըշուկ լըռութիւնն այս կը խռովէ